45-ՐԴ ՆԻՍՏ

12 դեկտեմբերի 1918թ.

Նախագահ - Նիստը հայտարարում եմ բացված:

Օրակարգի խնդիրներն են:

1. Կառավարության հայտարարությունը.
2. Գաղթականական գործի պառլամենտական հանձնաժողովների ընտրությունը.
3. Ընթացիկ հարցեր:

Խոսքը Մինիստր-նախագահինն է:

Մինիստր-նախագահ - Ես պետք է հաղորդեմ խորհրդին, որ Լոռվա շրջանում 3-4 օր է, որ տեղի են ունենում տխուր դեպքեր. այնտեղ սկսվել են զինական ընդհարումներ վրաց զորքի և տեղական ազգաբնակության մեջ: Թե ինչպե՞ս են սկսվել այդ ընդհարումները, մանրամասնությունները հայտնի չեն: Միայն հայտնի է, որ վրաց կառավարությունը մարդ է ուղարկել Ուզունլար և ուրիշ հարևան գյուղեր՝ որոշ պահանջներով. տեղացիները չեն հպատակվել և վրաց կառավարության պահանջները չեն կատարել, որի հետևանքով վրաց զորքը զենք է բարձրացրել հանդեպ տեղացի հայ ազգաբնակության և դրանով ինցիդենտը մեծ ծավալ է ստացել: Այսօր Լոռվա հայկական գյուղերն ապստամբական դրության մեջ են: Վրաց կառավարությունը պահանջներ է դնում այդ տերիտորիայի վրա բնակված ժողովրդի վրա՝ համարելով այդ տերիտորիան իր[են]ը: Իսկ տեղացիները, որ ամբողջովին հայեր են, չճանաչելով այդ անհարազատ իշխանությունը, հակված լինելով և գիտակցելով, որ մեր տերիտորիայի մասն է Լոռին՝ ապստամբել են: Այդ բոլորի հետևանքն այն է եղել, որ վրաց զորքը գործ է ածում թնդանոթներ և գնդացիրներ՝ հայ խաղաղ բնակչության վրա: Լոռվա ազգաբնակությունը խնդրում է մեր կառավարությունից, որ վերջինս օգնի իրան վայրագություններից ու կործանումից: Մենք երբեք չենք հաշտվել այն մտքի հետ, որ հայաբնակ Լոռին Վրաստանի տերիտորիայի մաս կարող է համարվել: Սահման-

ներ գծելիս անդրկովկասյան ժողովուրդների մեջ առաջնորդվել ենք էթնոգրաֆիկ սկզբունքով: Դեպքերն այնպես էին դասավորված, որ մեր տերիտորիայի մի մասը գերմանացիների աջակցությամբ վրացիները գրավեցին իրենց զորքերով: Մենք կարծում էինք, որ Վրաստանն այնքան տակտ կունենա, որ ծայրահեղությունների չի հասցնի հայկական շրջաններով և խնդրի լուծումը խաղաղ ճանապարհով կվերջանա: Մեզ ստիպել են լռությամբ տանել այդ հանգամանքը, լռությամբ ոչ խոսքի, այլ գործի: Սակայն պարզվեց, որ վրացիներն ուզում են իրենց դիրքը հիշյալ գավառներում ամրապնդել և նույնիսկ առաջ շարժվել՝ նախօրոք գրված ունենալով բարձրավանդակները: Տեղական ժողովուրդը բացարձակապես չի հանդուրժում օտարի իշխանությունը, տեսնելով բռնի ուժի ենթարկվել՝ զենքի է դիմում և դիմադրում վրաց զորքերին: Հայաստանի կառավարությունը չի կարող հաշտվել, որ իր ժողովուրդը, իր հարազատներն իր երկրում վայրագությունների ենթարկվեն ապօրինաբար իշխողների կողմից, որ Վրաստանը իրանն համարելով և թնդանոթային ու գնդացիրային կրակով լռեցնեն ժողովրդի ձգտումներն ու ցանկությունները: Հայաստանի կառավարությունը պարտք համարեց դիմել վրաց կառավարությանը, որ վրացական զորքերը հեռացվեն այդ շրջանից: Կառավարությունը կարծում էր, որ խելահասությունը պիտի թելադրեր ընդառաջել մեր դիմումին՝ առաջնորդվելով ազգերի ինքնորոշման սկզբունքներով, որ վրաց կառավարության անդամները շատ հաճախ այնքան շեշտել են: Բայց եթե դժբախտաբար վրաց կառավարությունը չկանգնի իր տեսակետի վրա, եթե ժողովրդի կամքը չուզենա ի նկատի առնել, Հայաստանի կառավարությունը ստիպված կլինի ուժով ստիպել՝ թողնել մեր երկրամասը: Ահավասիկ կացությունը և կառավարության տեսակետը. զեկուցելով խորհրդին, կառավարությունը կուզեր լսել խորհրդի կարծիքը՝ որքան նպատակահարմար և հարգելի է գտնում կառավարության բռնած դիրքը և իր որոշումը՝ հետագայում վրաց կառավարության անհամաձայնության դեպքում:

Ա. Խոնդկարյան - Ես կառավարությունից կուզեի իմանալ, թե կառավարությանը իր ունեցած տեղեկություններով, ապստամբած ազգաբնակության մեջ մեկ միանալու տրամադրության մասին որոշ բան հայտնի՞ է:

Մինիստր-նախագահ - Ունեցած տեղեկությունները ոչ մի կասկած չեն թողնում նրանց մեզ միանալու մասին:

Պ. Չաքարյան - Ես կուզեի կառավարությունից իմանալ, թե՞ արդյոք բոլոր հայկական գյուղերն ապստամբ դրության մեջ են այժմ, թե՞ միայն մի քանիսը: Հետո ցանկալի էր, որ այդ խնդրի մասին ստացված բոլոր հեռագիրները կարդացվեին:

Մինիստր-նախագահ - Կառավարությունը տեղեկություններ չունի, թե որ գյուղերն են ապստամբվել. կառավարությունը հնարավորություն չունի թվելու այդ դրության մեջ գտնվող բոլոր գյուղերի անունները: Երկու օր է, որ հեռագիրներն հաղորդում են ամբողջ Լոռվա ապստամբական շարժման մասին: Ինչ վերաբերում է ստացված հեռագիրների ընթերցման, իմ զեկուցումը սպառեց այդ հեռագիրների բովանդակությունը: Հատ ու կտոր հեռագիրների ընթերցումը աշխատանքը չի թեթևացնի:

Ստեփանյան - Կարող ենք մենք այդ ընդհարումներից ազատ լինել, քանի որ հարցը վերաբերում է ժամանակավոր սահմաններին, հետո արդեն բանակցություններ վարել:

Ա. Խոնդկարյան - Ըստ էության:

Մինիստր-նախագահ - Մեր և վրացիների մեջ սահման չունենք: Մենք ասել էինք, քանի դեռ սահման չի ընդունված, մեր զորքերը թող կանգնեն այս գծով, իսկ վրացական զորքերը կանգնեն թող այնտեղ՝ մատնանշելով մի որոշ գիծ: Այստեղ հարցը վերաբերում է հայկական կոտորածներին ու ճնշումներին:

Ա. Խոնդկարյան - Ըստ կարգի:

Նախագահ - Խնդրեմ, պատգամավոր Խոնդկարյան:

Ա. Խոնդկարյան - Առաջարկում եմ հարցերը դադարեցնել և ֆրակցիաներին տալ մեկական ձայն՝ արտահայտվելու համար:

Հ. Ազատյան - Նախքան ֆրակցիաների արտահայտվելն ես կուզեի կառավարությանը մի հարց տալ, թե արդյոք զոհաբերություններ չե՞ն եղել մինչև այժմ վրաց զորքերից և մեզնից:

Ձայներ - Վրաց ժողովո՞ւրդը, թե զորքը:

Ա. Խոնդկարյան - Խնդրեմ, քվեարկեք:

Ձայներ - Քվեարկե՛լ, Քվեարկե՛լ:

Նախագահ - Ո՞վ ցանկանում է, որ այս խնդրի քննության ֆրակցիաների կողմից մեկական ներկայացուցիչներ արտահայտվեն:

Առաջարկն անցնում է մեծամասնությամբ:

Նախագահ - Դնում եմ երկրորդ հարցը քվեարկության՝ խորհուրդը ցանկանու՞մ է բոլոր հեռագիրների ընթերցումը:

Առաջարկությունն ընդունվում է 17 ձայնով:

Արտաքին գործոց մինիստր - Զինվորական մինիստրը ստացել է հետևյալ հեռագիրը.

"Военному министру

7 декабря эскадрон первого дивизиона и команда разведчиков 4-го полка заняли Гореловку Ахалкалакского уезда. 8 декабря утром выслан разъезд в Богдановку. Прибывший в Богдановку грузинский офицер предложил разъезду отойти и совершенно уйти из пределов Ахалкалакского уезда. Начальник заставы заявил: без приказания моего начальства он не очистит, после чего появилась грузинская конница в составе трехсот всадников и взвод орудий. К 14 часам 8 декабря, вошедший эскадрон из Гореловки и Богдановки слышал пулеметный и ружейный огонь: Дальнейших донесении пока не получал. N 039, 9 декабря 18г., 22ч. Дро".

Դեկտեմբերի 7-ին Դրոն հեռագրում է.

«Ուզունլարցիները ահա երկու օր է, որ գտնվում են վրացական զորքի թնդանոթային և գնդացիրային կրակի տակ: Լոռու շրջանի հյուսիսային մասի հայ գյուղերն ենթարկվում են թալանի և կողոպուտի նույն զորքերի կողմից: Ազգաբնակությունն օգնություն է խնդրում. դրությունը ծայր աստիճան հուսահատական է: Հայտնում եմ, որ եթե վրացական զորամասերը շարունակեն տանջել հայ ժողովրդին, այլևս չեմ կարող լռել: Խնդրում եմ Հայաստանի կառավարությանը ձեռք առնել կտրուկ միջոցներ, կամ ընդունել իմ հրաժարականը: Սպասում եմ շուտափույթ պատասխանի» N 0151.:

Ես մի հեռագիր ուղարկեցի Տփխիս՝ կառավարության հրահանգով, բայց, ինչպես երևում է, չի հասել՝ կապ չլինելու պատճառով.

Срочно 9/XII
Тифлис

Министру иностранных дел

Копия дипломатическому представителю Армении

Начальник Каракилисско-Лорийского отряда доносит, что узунларцы вторые сутки находятся под артиллерийским пулеметным огнем грузинских войск, что армянские селения северной части Лорийского участка подвергаются грабежам, насилиям со стороны тех же войск. Правительство Армении настойчиво протестует против бесчинств грузинских войск в районе входящем в территорию Армении и насильственно занятом грузинскими войсками. Если Вами не будет приняты немедленно меры прекращению, ответственность за последствие Правительство Армении снимает с себя. Министр иностранных дел Армении

Երեկ ուղիղ հեռագրաթելով խոսեցի վրաց դիվանագիտական ներկայացուցիչ Մդիվանիի հետ: Մդիվանին Ղարաքիլիսայից հայտնում է.

Ղարաքիլիսա, 11-ն դեկտ[եմբերի 1918]

«Այսօր հասա Կոբեր կայարանը, բայց ավելի առաջ շարժվելու հնար չեղավ. գյուղացիները թույլ չտվին, որ մեր գնացքն առաջ շարժվի: Գյուղացիների պատմածից ինձ համար պարզվում է, որ այնտեղ ապստամբություն է և գործը լուրջ կերպարանք է ստանում: Այս ամսին ես իմացա դեռ Ալեքսանդրապոլում, ուր և որոշ համաձայնության եկանք խնդիրը նպաստավոր կերպով լուծելու համար՝ առանց բարդությունների և օտար ուժերին մեր ներքին կյանքի մեջ խառնվելու»:

Իմ այն հարցումին, թե հայտնի՞ է իրեն՝ վրաց կառավարության ներկայացուցչին, այն հեռագիրը, որ ես մեր կառավարության հանձնարարությամբ դեկտեմբերի 9-ին ուղղել էի վրաց արտաքին գործոց մինիստրին բողոքելով այն բռնությունների դեմ, որ գործում է վրաց զորքը Լոռիի հայ բնակչության վրա, Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչը հայտնում է.

«Այդ հեռագիրը չի հասել տեղ, որովհետև կապը կտրված է Կոբերի և Քոլագիրանի միջև: Կոբերում ինձ հաջողվեց երկաթուղային հեռագրով կապվել և խոսակցել գեներալ Ցուլուկիձեի հետ. նրանից իմացա, որ այսօր գնդակոծել են Սանահին և Ալավերդի կայարանները, բայց ինքը չի պատասխանել: Երկաթուղագիծը գյուղացիները խանգարել են երկու տեղ՝ Կոբերի և Սանահնի մեջ և Սանահնի ու Ալավերդիի միջև: Երկու զրահապատ գնացքների միջոցով գեն[երալ] Ցուլուկիձեն կարող էր վերականգնել գիծը, բայց նա չի անում, որովհետև հարկ կլիներ խիստ միջոցների դիմել: Տեղական գյուղացիները գանգատվում են զորքի և տեղական ադմինիստրացիայի դեմ: Ինչ որ էլ լինեն այդ դեպքերն առաջացնող պատճառները, համենայն դեպս, Հայաստանի կառավարությունը իր վերաբերմունքով չպետք է խստացնի առանց այն էլ ծանր կացությունը, որն ստեղծվել է երկու հանրապետություններից անկախ»:

Իսկ իմ այն հարցին, թե ի՞նչ ելք ու միջոց է նա գտնում այս դրությունից դուրս գալու համար, նա պատասխանեց.

«Կարծում եմ, որ անհրաժեշտ է հայոց և վրաց հանրապետությունների ներկայացուցիչները շրջեն ապստամբած գյուղերը և առաջարկեն հնազանդել գոյություն ունեցող կացությանը՝ մինչև սահմանային վեճի լուծելն և ոչ մի հույս չներշնչել, թե հարցի լուծման այսպիսի եղանակը կարող է որևէ մեկի կողմից հավանություն գտնել: Իհարկե, մեղավորները, եթե կան, թե՛ ադմինիստրացիայի և թե՛ ժողովրդի կողմից, կկրեն հարկավոր պատիժը. զիջում կարող է լինել ժողովրդի վերաբերմամբ, բայց ոչ մի խնայողություն հանցավոր ադմինիստրացիայի վերաբերմամբ»:

Ի պատասխան վերոհիշյալների, ես ասացի հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության կառավարությունը չի կարող հաշտվել ազգաբնակության վրա կատարած դաժան բռնությունների հետ, ոչ էլ ազդել, որ ժողովուրդը հարկադրված ենթարկվի մի իշխանության, որը հանիրավի մնում է Հայաստանի երկրամասը կազմող վայրերում: Մեր կառավարությունը կարծում է, որ կատարված իրադարձություններն ու ստեղծված դրությունը պահանջում են, որ վրաց դեմոկրատիկ հանրապետության կառավարությունը իր իսկ սեփական նախաձեռնությամբ դուրս հանի այդ բոլոր վայրերից իր զորքերը՝ հարգելով ժողովրդների ինքնորոշման իրավունքը և հանուն խաղաղության: Խնդրում եմ, որ դուք այս ուղղությամբ ազդեցություն գործեք»:

Պատասխանը եղավ հետևյալը.

«Ես կրկնում եմ իմ առաջարկը՝ խառն ներկայացուցիչներ ուղարկելու մասին»:

Ապա խառն ներկայացուցչության աննպատակահարմարությունն զգալով, ես պատասխանեցի.

«Ի նկատի ունեցեք, որ դելեգացիան երկու հանրապետությունների կողմից, լավագույն դեպքում Բորչալու, կարող կլինի գալ մի քանի օրից հետո, մինչդեռ անհրաժեշտ է հիմա իսկույն միջոցներ ձեռք առնել ժողովուրդը խաղաղացնելու և հանգստացնելու՝ գոհացում տալով իր արդար պահանջներին: Սակայն եթե դուք Ձեր այդ առաջարկը միակ ընդունելի միջոցն եք համարում, ես կհայտնեմ կառավարությանը»:

Նա գտնում է, որ իր առաջարկած միջոցը կարելի է արագ կատարել, մինչդեռ իմ առաջարկը Թիֆլիս հաղորդել անհնար է համարում՝ կապը կտրված լինելով: Ես առարկեցի.

«Եթե կապը կտրված է, ապա ինչպե՞ս իմաց պիտի տրվի Տփխիս, որ վրաց պառլամենտից ներկայացուցիչներ գան: Համենայն դեպս ես Ձեր առաջարկը կհաղորդեմ կառավարությանը, իսկ Դուք խնդրում եմ որևէ կերպ իմաց տաք վրաց կառավարությանը, որ գոնե անմիջապես վերջ տրվի բոլոր պատերազմական գործողություններին և զորք ուղարկելուն, որովհետև դրանով ավելի է խորանում վիհը, բորբոքվում կրքերը և դժվարացնում խաղաղ հարդարման հնարավորությունը»:

Զինվորական մինիստր - Ի լրումն արտաքին գործերի մինիստրի տված տեղեկությանց, ես կավելացնեմ հետևյալը.

Эривань, из Шагалы, N 5,10/XII

Военному министру

Доносим, что 8 декабря грузинские войска хотели занять селение Узунлар; не имел возможности поместить их, общество отказало; войска решили занять силою; 2 дня, что Узунлар находится под артиллерийским огнем; грузины угрожают вырезать узунларцев 1000 домов; просим спешное распоряжение дать помощь погибающему родному народу,

Выборные Узунларского общества *Тадиян и Каракешишян*

Начальнику Военного Штаба

За одиннадцатое декабря на всех фронтах без перемен. В районах Давалу, Сурмалу и Сардарабатском устанавливаются хорошие отношения матар с армянами. С 9 декабря начали получаться сведения, что в Лорийском районе грузины начали производить насаления над мирным армянским населением. Селение Узунлар и Цатер подверглис артиллерийскому и пулеметному огню, что заставило жителей ближайших сел самим перейти в наступление, выдержав сильный бой, обратили грузин в бегство, захватили пулеметы, разобрали путь, отрезав дорогу двум бронированным поездам. Пока к 12 декабря армянскими крестьянами заняты селение Санаин, они подошли к самому заводу Аллаверди. 12 декабря, 10ч. N 01159. Зинкевич.

Эривань, из Каракилиса

Председателю министров

Копии Начдиву и Военному министру

В Ахалкалакском направлении грузины повели наступление: на основании приказа начдива я приказал отойти от Богдановки на Гореловку. К последному вновь подошли грузинские части, наши отошли на границу. Грузинский отряд во всем Ахалкалакском направлении пока обнаружилось в составе 300 человек при 4-х орудиях. Завтра утром весь первый дивизион выдвигаю на границу Ахалкалаки. Лорийские события не требуют отлагательства. Прошу разрешения пока немедлено занять Санаин, Воронцовку-Аллаверди. N 0386, 12 декабря 1918г., 19ч. Дро.

Начальнику Военного Штаба

Правая колонна продолжает выполнение своей задачи. Татарские села занимаются войсками безболезненно, жители выдают оружие. После ухода всех хумбов из района занятой войсками от населения жалоб на грабежи не поступают: Приказано начальнику колонны возможно быстрее занимать район указанный в боевом приказе. От правой колонны выслана разведка на Кульпы для выяснения, где настоящее время сосредоточились турецкие

части и где группируются курдские банды. Донесение пока не поступало. В Делижанском районе без перемен идет новая группировка частей отряда.

В Каракилисско-Лорийском, Александропольском отрядах грузины третий день обстреливают население Узунлара, Цатеры. Железнодорожные служащие в панике разбежались. От Ахалкалакского конного отряда после встречи в районе Гореловка-Богдановка грузинскими частями донесений не поступало. В отрядах идет новая перегруппировка. N 011355, 11 декабря, 12 часов, *Зинкевич.*

Նախագահ - Դիմում ենք խնդրի քննության: Պատգամավոր Աղբալյան, ձայնը Ձերն է:

Ն. Աղբալյան - Հարգելի պատգամավորնե՛ր, վրաց կառավարությունը, չեմ ուզում ասած լինել ժողովուրդը, ստեղծում է մեզ համար անախորժություններ հանիրավի: Դրությունն այս է՝ մի երկրամաս, որ իր աշխարհագրական դիրքով կցվում է Հայաստանին, ուր բացառապես ազգաբնակությունը հայերից է բաղկացած, ուրիշ ազգեր էլ կան, բայց վրացիներ, վրացիներ չկան: Այժմ այդ հողամասն ինչ-ինչ նկատումներով համարում են իրանցը՝ ինչ որ ռազմագիտական պատմական հիմանց վրա: Նման հիմունքներով սնվել է ռամկավար Վրաստանը, ռամկավարական սկզբունքներին ոչ մի կապ չունի և ոչ մի արդարացում չի կարող ունենալ: Ասացի, որ այդ հողամասը վրաց կառավարությունը համարում է իր[են]ը, բայց այդ նույն հողամասը մենք ևս մեր կողմից համարում ենք մերը: Այստեղի ազգաբնակության 80 տոկոսը հայեր են. սկզբունքով թե՛ մենք և թե՛ մանավանդ նրանք, ազգերի ինքնորոշման վեհ սկզբունքների ջատագովներ ենք եղել. սկզբունքներ, որոնց ռամկավարությունն երկուսիս համար էլ ընդունելի են եղել: Հիմա էլ նույնն է: Նրանք ոչ մի կասկած չունեն, որ այդ երկիրը մերն է, մեր հանրապետության անբաժանելի մասը, բայց այսօր մենք հակառակն ենք տեսնում, փաստորեն նրանք իշխող են այժմ այդ երկրամասում: Այդ հողամասում ապրում է մի ժողովուրդ, որին պիտի հարցնել, թե նա ում հետ է ուզում լինել: Նա արտահայտել է իր կամքը պարզ և որոշ՝ իրեն համարում է մերը և միանալ է ուզում մեզ հետ: Նա մտածում է մեզ պես: Եվ ներս է մտել օտարը, անհարազատը, որ այնտեղ ժողովուրդ բնավ չունի: Ուրեմն կա մի հողամաս, որի բնակչության խոշորագույն տոկոսը հայերն են. այդ հողամասի ազգաբնակությունը չի ուզում օտարի հետ լինել: Բայց կա մի հանրապետություն, որը ռամկավար տեսակետների մղումով ներս է մտել մի օտար երկիր և իշխում է այնտեղ...* մի երկիր, որ իր իսկ կարծիքով վիճելի է և առանց խաղաղ միջոցների դիմելու նա բռնագրավում է, մտնում է այստեղ: Եթե մեր խորհուրդը լիներ այն խորհուրդը, որ պետք է լիներ, եթե ունենար այն զգացմունքը, որ պիտի ունենար, եթե այն հոգեբանությունը ունենար, որ պետք է ունենար, նա զգվանք պիտի հայտներ նման ոտնձգությունների վերաբերյալ:

Կառավարությունը շատ զուսպ, չափավոր դիրք է բռնել. նա առաջարկել է կամովին հետ քաշվել: Նա չի վռնդում, այլ առաջարկում է կամովին հետ քաշվել: Մեզ մնում է միայն հաշտվել կառավարության արած քայլերի հետ:

Վրաց կառավարության ներկայացուցիչն ասում է, պետք է խառն ներկայացուցչություն ուղարկել՝ խնդիրը հարթելու համար: Գնա մեր ներկայացուցչությունը այնտեղ, որ ասեն նրան՝ հպատակվեցեք վրաց կառավարությանը: Ես չգիտեմ, թե սա ինչով որակեմ. բառեր կան, բայց...* Ավելի հանդուգն առաջարկ ես չեմ կարող երևակայել: Մեր կառավարությունը պետք է լինի զգույշ, բայց և կտրուկ: Լռին մերն է, և ժողովուրդն իրավունք ունի ինքնորոշվելու և պետք է նրա ձայնը որոշող լինի: Պետք է վերջ տալ այս կատակերգությանը. պետք է պարզել Վրաստանի և Հայաստանի հարաբերությունները. պետք է ասել, որ մեզ է պատկանում այդ երկիրը անվիճելիորեն:

---

* Բազմակետերը բնագրինն են:-Ծանոթ.կազմ.:

Հավանություն ենք տալիս կառավարության քայլերին և պահանջում ենք պատրաստ լինել հարկ եղածին պաշտպանել հայ ժողովրդին և Հայաստանի Հանրապետության արդարացի իրավունքները:

Ա. Մալխասյան - Ամենատխուր փաստի առաջ ենք կանգնած. դա այն է, որ պատերազմը կոչնչացնի՝ սովի մատնելով թե՛ մեր և թե՛ վրաց ժողովուրդները: Եվ այդ շնորհիվ այն հանգամանքի, որ թե մեր և թե վրաց կառավարությունները ոչինչ չարեցին, չկարողացան այս հարցը խաղաղ ճանապարհներով լուծել: Այդ փաստը իր ամբողջ հետևանքներով խորապես հուզում է մեզ և շատ ու շատ զբաղեցնում: Մի քանի օր առաջ Մինիստր-նախագահ Քաջազնունին այս նույն ամբիոնից հայտարարեց, որ պատերազմ չի լինի: Հիմա հայտարարեց, որ կլինի, անխուսափելի է և արդեն նույնիսկ սկսվել [է]: Մեր ֆրակցիան պատգամավոր Աղբալյանի և կառավարության հայտնած տեսակետի վրա է կանգնած. դա ազգերի ինքնորոշման տեսակետն է: Բոլոր այն բանավեճերը, որ մղվում են վրաց կառավարության հասցեին՝ հայ ժողովրդին իշխելու տրամադրություն ունենալու մեջ, սխալ է: Մենք ընդունում ենք, որ Լոռին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի մասն է կազմում:

Ձայներ - Միթե՞:

Մալխասյան - Ես զարմանում եմ, որ զարմացական բացականչություններ են արվում: Ես այդ բանը միշտ էլ ասել եմ: Սակայն ներկա պայմանների մեջ խորանալով, մենք գտնում ենք, որ չպետք է կռվել և պետք է այդ խնդիրը միառժամ լիկվիդացիայի ենթարկել:

Ձայն կենտրոնից - Նրանք են տեղիք տալիս:

Մալխասյան (շարունակում է) - Ես չեմ բացառում, ես չեմ ժխտում: Խնդրի, ստեղծված կոնֆլիկտի ամենահաջող լուծման ձևը մենք համարում ենք արբիտրաժը. պետք է երկու դեմոկրատիկ ժողովուրդների դեմոկրատիկ խորհուրդներից կազմված խառն հանձնաժողովը բարեհաջող լուծումն տա՝ հիմնված դեմոկրատիաների կամքի և ցանկության վրա: Եթե մենք անկեղծորեն տոգորված լինեինք, որ պատերազմ չառաջանար, կարելի էր միշտ այնպիսի պայմաններ առաջարկել, որ նրանց համար էլ ընդունելի լիներ, մեզ համար էլ: Միշտ կարելի է գտնել միջին գիծը, միշտ հնարավոր է փոխադարձ հասմածայնության ընդհանուր հիմունքներ գտնել: Բայց այդպիսի տրամադրություն չկա, ես չեմ տեսնում: Ասացեք խնդրեմ, ի՞նչ է խանգարում արբիտրաժի սկզբունքին: Ես կարծում եմ, որ եթե վրաց զորքերը չհեռանան, կարող են զանազան անախորժություններ թույլ տալ, վրեժ լուծել ժողովրդից: Բայց խառն ադմինիստրացիան կարող է բավական դրական հետևանքներ ունենալ: Մենք եթե հենց այժմ դիմենք խնդրի այս ձևի լուծմանը, պատերազմը լիկվիդացիայի կենթարկվի անմիջապես: Մենք կատեգորիկ կերպով հակառակ ենք պատերազմին:

Վ. Տ[եր]-Թորոսյան (տեղից) - Չարժե Ձեզ պատասխանել:

Նախագահ - Մի խանգարեք:

Խոնդկարյան (տեղից) - Չեն սովորում:

Մալխասյան (շարունակում է) - Մենք ունենք միայն մի լուսամուտ. դա Տփխիսն է և չպետք է այդ ճանապարհը վտանգել. մենք ամեն ինչ համարյա ստանում ենք Տփխիսից: Բավական է ասել, որ մեր բժիշկների մեծամասնությունը հիվանդ պառկած են և համաճարակի դեմ կռվելու համար Տփխիսից էր, որ սպասում էինք բժիշկների: Ավելորդ եմ համարում հիշատակել այն բոլոր կենսական մթերքները, պարենավորման նյութերը և այլն:

Մ. Հարությունյան - Ո՞վ թույլ չի տալիս մեզ հաց ստանալ:

Մալխասյան - Ինձ թվում է, թե բավական հաց կստանար Բուդաղյանը, եթե գնար Տփխիս:

Բուդաղյան - Ես ոչ մի կապ չունեմ Տփխիսի հետ, այդ ծեր բանն է, պ[ատ]գամավոր] Մալխասյան:

Նախագահ - Խնդրում եմ ուշադրություն չդարձնեք, պատգամավոր Մալխասյան և շարունակեցեք:

Մալխասյան (շարունակում է) - Վրաց հանրապետությունը եթե դավաճանում է հանձինս իր կառավարողների դեմոկրատիկ սկզբունքներին, դա միան մի բացատրություն ունի՝ նրանք հաց արտադրող շրջաններից զուրկ են միանգամայն և դիմում են աններելի միջոցների:

Ես նորից պնդում եմ, որ պատերազմից պետք է խուսափել: Եթե նույնիսկ մենք հաջողություն ունենանք, չպետք է դրանով տարվենք: Մենք ցանկանում էինք կոնֆերանս գումարել, բայց շնորհիվ կենտրոնի և կառավարության բռնած դիրքի՝ կոնֆերանսը չգումարվեց: Մենք կարծում ենք, որ երկու փոքր դեմոկրատիկ հանրապետությունները չեն, որ այդ խնդիրը վերջնականապես պիտի լուծեն: Եթե նույնիսկ մենք երկու դեմոկրատիաների արյան գնով տիրանանք մեր երկրին, համենայն դեպս ոչ մի երաշխիք չունենք, որ վաղը համաձայնության պետության ներկայացուցիչները մեզ համար հակառակ որոշում չեն տա, մանավանդ որ գեներալ Թոմսոնին արդեն տրամադրում են. Ադրբեջանին այդ մասամբ հաջողվել է. մենք ծանոթ չենք նրանց տրամադրություններին. իսկ եթե խաղաղ ճանապարհով հարցը լուծենք, այն ժամանակ մի երրորդ պետության թույլ տված չէինք լինի մեր ներքին գործերին խառնվելու: Խորհուրդը իր վրա պետք է վերցնի հարցի խաղաղ լուծումը. նա պետք է այնպիսի միջոցների դիմի, որ արյունահեղության տեղիք տված չլինի: Այստեղ մեկի մատը խառն է, բայց պետք է կողմնակի ձեռքերն հեռու լինեն դեմոկրատիաներից: Արդեն վրաց կառավարության հետ երկաթուղային հաղորդակցության կապը կտրվել է, պետք է հաստատել, որովհետև դա է մեր կյանքի երակը:

Ես ամփոփում եմ իմ ասածները, վիճելի գավառները պատկանում են Հայաստանի Հանրապետության: Այդ վեճը պատերազմի միջոցով լուծելը համարել անթույլատրելի, միակ ելք ընդունում ենք արբիտրաժը: Առաջարկել վրաց կառավարությանը զորքերը քաշել այդ շրջաններից՝ ցավալի դեպքերը կանխելու համար, խոստանալով, որ հայ զորքը չի մտնի այդ շրջանները՝ մինչև արբիտրաժի որոշումները: Կազմել մինչ այդ խառն ադմինիստրացիա: Բանակցությունները վարել պառլամենտական հատուկ հանձնաժողովների միջոցով, որոնք մեկնելու են դեպքերի վայրը. այդ բոլոր առաջարկները վրաց կառավարության՝ հայտնել ի գիտություն դաշնակից պետությանց ներկայացուցիչներին՝ խնդրելով իրենց ազդեցությունը գործ դնեն այս խնդրի խաղաղ լուծման համար:

Մինիստր-նախագահ - Քիչ առաջ արվեց մի ակնարկ այն մասին, թե Լոռվա ապստամբության համար «մեկի մատը խառն է»: Ես լավ չհասկացա, այդ ակնարկն ու՞մն է վերաբերում: Ինձ թվում է, ակնարկն ուղղված է կառավարության հասցեին. եթե սխալ եմ հասկացել, թող պատգամավոր Մալխասյանը բացատրի և կամ ասի, որ կառավարությանը չի վերաբերում:

Ա. Մալխասյան - Ես ոչ ոքի պարտավոր չեմ բացատրություններ տալու, բայց և այնպես կասեմ, որ կառավարությանը չի վերաբերում:

Նախագահ - Մյուս ֆրակցիաների ներկայացուցիչներն ուզու՞մ են արտահայտվել, թե՞ անցնենք առաջարկներին: Պատգամավոր Գյուլնազարյան, խոսքը Ձերն է:

Գյուլնազարյան - Այստեղ արտահայտվեցին երկու հռետորներ. առաջինը ամբողջովին զգացմունքով և հայրենասիրությամբ էր լցված, իսկ երկրորդը՝ սառն դատողականությամբ և խոհուն տակտիկայով: Առաջինն այնքան հեռու գնաց, որ նույնիսկ ներկա խորհրդի կազմը անձեռնհաս գտավ որոշելու նման խնդիրներ: Ես այդ կարծիքին չեմ ներկա հարգելի խորհրդարանի մասին. նա իսկական արտահայտիչը լինելով մեր ժողովրդի՝ իր սառը վճիռը կտա: Այստեղ առաջներում շատ է խոսվել թե արբիտրաժի, թե միջազգային հանձնաժողովների [մասին], բայց կառավարությունը ոչինչ չի արել. լսեցին և ոչինչ չարեցին: Այդ Կոբերի խնդրի մասին էր. գուցե այդ այն պատճառով, որ այնտեղ՝ Վրաստանում, իշխում էր գերմանական բռունցքը: Այդ դեպքում ի՞նչ կարելի էր անել:

Ներկա խնդրում ևս վրաց կառավարությունն անհանդուրժելի դիրք է բռնել: Ես վրացատյաց չեմ, ընդհակառակը՝ ծնվել եմ Վրաստանում, մեծացել այնտեղ և

վրացասեր եմ, բայց վրացական կառավարության բռնած դիրքը մեզ զարմանք կարող է պատճառել միայն:

Թուրքը մեզ ջարդեց, ռուսը ջարդեց, վրացի՞ն էլ ջարդի: Նա իր բռնած դիրքով երկու հարևան երկրների խաղաղ կենակցությունն ուզում է խանգարել՝ թշնամանք և ատելություն սերմանելով նրանց մեջ: Սոցիալ-դեմոկրատները Հովբի համբերությունն են ուզում պատվաստել մեզնում. հապա այդ խոհեմության և համբերության 1/100-երորդական մասը ինչու՞ սոցիալ-դեմոկրատիայի լիդեր Ծերեթելու մեջ մենք չենք տեսնում: Այդ նույն մարդը, չգիտեմ ինչու՞, միշտ Հայաստանի Հանրապետության վրա խեթ աչքով է նայում: Տփխիսում ասել է մի անգամ. «Ի՞նչ Հայաստանի մասին եք մտածում: Ավելի լավ չէ՞ր լինի, որ մի մեծ Վրաստան ստեղծվեր և հայերը նրա թևի տակ ապրեին»: Դա ասում է այն Ծերեթելին, որ ինքնորոշման քարոզիչն է: Այժմ նրանց բռնած նման դիրքից հետո այլևս կիսամիջոցներն ավելորդ են: Գորդյան հանգույցը կա, հասունացել է և պետք է լուծել: Թվում էր, որ մի ժողովուրդ, որ չպետք է դիմեր ագրեսիվ քայլերի, դա Վրաստանն է: Այն ժամանակ դեռ, երբ գերմանական զորքեր կային, երբ Գերմանիան կար, կարող էր՝ ուժի վրա հենվելով. բայց այժմ, երբ անգլիական, ֆրանսիական միսիաները վաղը կամ մյուս օրը այստեղ են լինելու, ի՞նչ հույսով, ինչի՞ վրա հենված նրանք պետք է այդպիսի քայլերի դիմեն, ես չեմ ըմբռնում: Չնայած այդ հանգամանքներին, այնուամենայնիվ մենք պետք է սկսենք բանակցել վրացիների հետ: Կարող են մեզ առարկել, թե ինչու անպայման մենք բանակցենք, ես կասեմ՝ որովհետև մենք կորցրել ենք մեր ազգի կեսը, մենք հյուծված ենք և քայքայված:

Վերջացնելով իմ խոսքը, պետք է ասեմ, որ հայ ժողովրդական կուսակցությունը տրամադիր է այս հարցը միանգամայն խաղաղ ճանապարհով լուծել, բայց ոչ ծայր աստիճան զիջումներ անելով. այստեղ կա նաև պատվազգացության խնդիր, որը մենք պարտավոր ենք հարգելու:

Մինախորյան - Կառավարությանը քննադատելիս պետք է ի նկատի ունենալ իրական պայմանները. դրա համար կառավարության անցյալ գործունեությունը չպետք է շոշափել: Այս խնդրում մեր կառավարությունը բացառիկ պայմաններում է գտնվում. խնդիրը նրանումն է, որ այս հարցը մյուսների նման չէ: Սա շատ ծանրակշիռ խնդիր է և ամեն մի պատգամավոր պարտավոր է արտահայտվել սրա մասին: Ստեղծված պայմաններում կամ պետք է զոհել ամեն ինչ՝ վրացիների հետ պատերազմ չունենալու նպատակով, կամ անել այդ պատերազմը՝ հայ ժողովրդին փրկելու համար: Եթե ես համոզված լինեի, որ սոցիալ-դեմոկրատների առաջարկը գործնական հետևանքներ կունենա, ես մեծ ուրախությամբ համաձայն կլինեի դրա հետ: Ժողովրդական կուսակցությունը ասում է, որ մենք պետք է բանակցենք վրացիներ հետ, որովհետև մենք կորցրել ենք մեր ժողովրդի կեսը: Սա բացատրություն չէ. մենք կորցրել ենք մեր ժողովրդի կեսը, այո՛, բայց ոչ վրացիներից, այլ անհավասար ուժի դեմ ենք կռվել: Գալով նրան, որ վրացիները իրենց զորքերը հանեն Լոռուց, իմ կարծիքով մեր զորքերը պետք է գնան, քանի որ առանց զորքի Լոռին չի կարելի կառավարել: Այն առաջարկը, թե վրաց զորքը հանելուց հետո այնտեղ ստեղծել մի ադմինիստրացիա վրացիներից և հայերից, դա ավելի վատթար վիճակ կստեղծի, քան հիմա է:

Հիմա ի՞նչ պետք է լինի մեր տեսակետը այս խնդրում, մինչև հիմա արտահայտված կարծիքների մեջ ոչ մի ֆրակցիա սկզբունքով չի տարբերվում մյուսից, միայն ոմանք կարծում են, որ խնդիրը արդեն լուծված է: Մենք հետաքրքրվում ենք, թե խնդրի այս կամ այն լուծումը ինչ հետևանք կունենա:

Ամբողջ աշխարհը մեղադրում է հայերին՝ համարելով նրան ամենաշովինիստ ազգը. ճի՞շտ է արդյոք դա: Այո, ճիշտ է և մենք չպետք է հերքենք դա, այլ պետք է պատճառներն իմանանք: Հայ ժողովուրդը այնպիսի պայմաններում է եղել, որ ստիպված է եղել միշտ դիմելու ինքնապաշտպանության: Ուրեմն որպեսզի հայերին դուրս բերել շովինիստական դրությունից, հարկավոր է նրանց համախմբել մի տեղ և այնպիսի տեղ, որ նա այլևս ինքնապաշտպանության կարիքը չզգա: Եթե Լոռին հանձնենք վրացիներին, հայ-վրացական հարաբերությունը ավելի կփչանա: Ապագա հայ-վրացական խաղաղ հարաբերության տեսակետից մեր ֆրակցիայի

կարծիքով Լոռին պետք է կցել Հայաստանին: Սակայն դրանով հանդերձ մեր ֆրակցիան առաջարկում է բոլոր խաղաղ միջոցները սպառել, եթե էլ ուրիշ միջոց չլինի, նոր միայն ընդհարման տեղիք տալ:

Մամիկոնյան - Մեզնում պառլամենտական կյանքը նոր է: Ամեն մի ֆրակցիա ուզում է մի նոր բան անել. այն ժամանակ, երբ մի գլխավոր փաստ է կատարվել, երբ մի ժողովուրդ իր թնդանոթներով կոտորում է մի ուրիշ ժողովրդի, որը չի դիմադրում ոչնչով: Եկել է վրաց սպան զորքով և թնդանոթով և հարձակվել է հայ գյուղացու վրա: Այս դեպքում պատգամավոր Աղբալյանը ճիշտ ասաց, որ դատաստան պետք է լինի: Միթե՞ այս դեպքում մեր կառավարությունը ագրեսիվ է, միթե՞ մեր կառավարությունը, որը թույլ տվեց վրացիներին մտնել Ախալքալաք և Լոռի, ագրեսիվ է: Ճիշտ է, ցավալի է, որ երկու ժողովուրդ ընդհարվում են, բայց ի՞նչ արած: Ասում են, որ այնտեղ ժողովուրդը ապստամբվել է օրինական իշխանության դեմ. ինչու՞ համար է վրաց իշխանությունը Լոռվում օրինական, երբ այնտեղ ոչ մի վրացի չկա և երբ Լոռին Հայաստանի մի մասն է կազմում: Ուրեմն, չգիտեմ, ինչու՞ Լոռում ապրող հայը չպետք է ապստամբվի Վրաստանի դեմ և պահանջի, որ ինքը միանում է Հայաստանին և վերջինիս մի մասն է կազմում: Դա շատ հասկանալի է. այդ ժողովուրդը իր բնական իրավունքներն է պաշտպանում:

Այստեղ կասկած հարուցվեց, թե Լոռվա դեպքերում մեկի մատը խառն է. այնպիսի թուլամորթ և անտեղյակ մարդիկ, ինչպիսին մենք ենք, այդպես կարող ենք ենթադրել: Ասում են ժողովուրդը քաղցած է, բժիշկներ չկան. չէ որ մեր այս բոլոր դժբախտությունների պատճառը վրացին է: Չէ՞ որ նրանց հետ՝ Ռուսաստանի անկումից հետո, որոշեցինք սահմանները պաշտպանել տաճիկ սվիններից, ինչու՞ դավաճանեցին մեզ: Վաղուց մեր երկիրը ոչ ոք չի գալիս, և բոլորը խուսափում են: Ո՞վ է մեղավոր, իհարկե Վրաստանը: Երբ ասացին ինձ, թե Վրաստանը իրեն անկախ է հայտարարել, իսկույն ես մտածեցի, թե ինչպես պետք է նա վարվի Ռուսաստանի թողած ժառանգության հետ, չէ՞ որ դրանից մեզ ևս բաժին է հասնում: Հետևանքը այն եղավ, որ այժմ նրանք գործ են ածում շաքար, իսկ մենք՝ դոշաբ, մեր զորքերը հագնում են չարուխ, իսկ նրանց զորքերը՝ կոշիկ: Վրաց մտավորականները թնդանոթներ ժառանգեցին Ռուսաստանից՝ հայ անմեղ ազգաբնակության վրա գործադրելու համար: Վրաց բարձր խավը ամեն միջոց գործադրեց, որ մեր ժողովուրդը հյուծվի: Այսպիսի պայմաններում նորից զիջման գնալը ես չգիտեմ, ինչով որակեմ: Ես շնորհակալ եմ Մալխասյանից, որ ասաց – վրացիները շովինիստ են: Սրա հետ միասին նա ասաց, թող Վրաստանի և Հայաստանի պառլամենտները խոսեն: Եթե նրանք շովինիստներ են, այն ժամանակ ինչպե՞ս խոսել նրանց հետ: Ծերեթելին կարող է ապացուցել ամեն բան, նրանք լավ գիտեն սոփեստական արվեստը: Այստեղ առաջարկում են կոնֆերանս հրավիրել, ու՞մ հետ՝ վրացիների՞, և գնալ այդ կոնֆերանս վրաց հեգեմոնիայի տակ ընկնելու համա՞ր: Ես կարծում եմ, որ հանգամանքները պարզ են. ինչու՞ Ուզունլարում վրացիները հայտնվեցին, որովհետև զորքին պաշար չուներ, զորքը այնտեղ մթերք կգներ, չնայած որ այդ գյուղը քայքայված է: Երկրորդ, որ վրացիք իրենց զորքը կենտրոնացնում են այդտեղ՝ իրենց թիկունքը ապահովեցնելու համար: Վրացիները իրենց գործը լավ գիտեն: Թող ամեն մի պառլամենտ և կառավարություն իր ժողովրդի ճարը տեսնի: Ուրիշ տեսակետ այսպիսի պայմաններում չի կարող լինել: Այստեղ ասում են, թե մեր կառավարությունը որևէ զիջում չարեց: Ես կասեմ, որ մեր կառավարության համբերությունը Հովբի համբերություն է: Սպասել, որ իր ժողովրդի մի մասը տանեն, դրա համար պետք է ունենալ այս մարդու (մատնանշելով պ. Քաջազնունուն) համբերությունը:

Ասում են, որ հայ ժողովուրդը ծանր դրության մեջ է և նա չի կարող պատերազմել. հային դուք դրանով չեք զարմացնի, այո, հայը գիտե անարդարության դեպքում պատերազմել: Մի սպասի անգլիացոց, որովհետև նրանց համար միև-

նույնն է, թե ում կպատկանի Լոռին, վրացու՞ն, թե՞ հային: Հենց դրա համար է, որ վրացիները ցանկացել են ստեղծել այնտեղ Fait accompei:*

Այժմ քեռիներ գտնելու ժամանակ չէ: Ճիշտ է ասել սոցիալիստ հեղափոխականների կուսակցությունը՝ «В борьбе обретешь ты право свое»** Այս խնդրում չպետք է տատանվել և ճիշտ այնպես պետք է վարվել, ինչպես Սողոմոն իմաստունը, երբ նրա մոտ երկու կին եկան և բերեցին մի երեխա ու երկուսն էլ կռվում էին ու ասում, թե այս երեխան իմն է: Սողոմոնն ասաց, երեխային երկու կես կանեմ և ամեն կեսը մեկին կտամ: Այն ժամանակ իսկական մայրը գրկեց երեխային և ասաց. սա իմն է, ես չեմ տա: Այդպես էլ պետք է վարվի Լոռվա խնդրում Հայաստանի կառավարությունը: Ես առաջարկ չեմ տա, որովհետև գիտեմ, որ չի անցնի (բուռն ծափեր):

Նախագահ - Վիճաբանություններն սպառված են. ավագ քարտուղարը պարտավորվում է կարդալ բանաձևերը.

Ավագ քարտուղար - Կարդում է սոցիալ-դեմոկրատների առաջարկը. «Հայաստանի Խորհուրդը լսելով կառավարության զեկուցումը Լոռվա դեպքերի մասին, որոշեց՝ 1. Վիճելի գավառները պատկանում են Հայաստանի Հանրապետության. 2. Համարելով հայ-վրացական վեճի պատերազմով լուծելն անթույլատրելի, իսկ կոնֆերանսի միջոցով՝ անհնարին, ինչպես այդ ցույց տվեց[ին] մինչև այժմ վարած բանակցությունները, միակ ելքը ընդունում է արբիտրաժը: 3. Առաջարկում է վրաց կառավարության՝ ցավալի դեպքերի զարգացման առաջն առնելու համար հետ քաշել զորքերը Լոռվա սահմաններից՝ խոստանալով, որ հայոց զորքերը չեն մտնիլ այս գավառն, սպասելով անմիջապես կազմվող արբիտրաժի վճռին. 4. Մինչև արբիտրաժի վճիռն՝ գավառում խառն հանձնաժողովի ձեռքով կազմել խառն ադմինիստրացիա. 5. Բանակցությունները վարել ոչ թե կառավարության ներկայացուցիչների, այլ պառլամենտական հատուկ հանձնաժողովների միջոցով, որոնք երկու կողմից էլ դիմում են դեպքերի վայրը. 6. Վրաստանին արած այս բոլոր առաջարկություններն հայտնել ի գիտություն դաշնակից պետությունների ներկայացուցիչների՝ խնդրելով նրանց գործադրել իրենց ազդեցությունը՝ այս հարցին խաղաղ լուծում տալու համար»:

Ստանում է 6 ձայն կողմ:

Ավագ-քարտուղար - Ապա կարդում է Հ[այ] ժողովրդական կուսակցության առաջարկը.

«Լսելով Մինիստր-նախագահի հաղորդագրությունը Լոռվա դեպքերի մասին, խորհուրդը որոշում է հավանություն տալ կառավարության ձեռնարկած բոլոր միջոցներին՝ այդ միջնադեպը հարթելու համար իրավունքի և արդարության հիմունքների վրա»:

Մինիստր-նախագահ - Հայ ժողովրդական կուսակցության բանաձևի վերջին մասը՝ «իրավունքի և արդարության հիմունքների վրա», կառավարության դժվար կացության մեջ կդնի, որովհետև անորոշ է. պետք է ընդհանրապես ֆրակցիաները պարզ և որոշակի հրահանգ տան կառավարությանը:

Գյուլնազարյան - Այդ վերջին բառերն ասելով, մենք ցանկացել ենք արտահայտել, որ արդարության և իրավունքի տեսակետից Լոռին մերն է և հետևաբար մեզ պետք է որոշվի, բայց որովհետև դա անորոշություն է մտցնում, մենք հետ ենք վերցնում այդ խոսքերը:

Ավագ քարտուղար - Կարդում է սոցիալիստ-հեղափոխականների բանաձևը՝

«1. Նկատելով, որ Լոռվա շրջանը հայկական է և դեմոկրատիայի սկզբունքները պահանջում են այդ հարցի լուծումը ազգագրական տեսակետով,

1. Նկատելով, որ ուրիշ որևէ լուծում մշտական կերպարանք կտա հայ-վրացական արդի հարաբերությանը՝ ազգային հարց ստեղծելով ապագայի համար երկու ժողովուրդների մեջ և վնասելով նրանց համերաշխության, սոցիալիստ

* Fait accompei ֆրանսերեն – կատարված փաստ:-Ծանոթ. կազմ.:

** Նկատի ունի Սոցիալիստ հեղափոխականների կուսակցության «Պայքարում ձեռք կբերես քո իրավունքը» կարգախոսը:-Ծանոթ. կազմ.:

հեղափոխականների ֆրակցիան առաջարկում է կառավարության՝ բոլոր հնարավոր միջոցներով աշխատել խնդիրը լուծել խաղաղ ճանապարհով, հակառակ պարագային պաշտպանել հայ ժողովրդի շահերը այդ շրջանում»:

Քվեարկվում և ստանում է 5 ձայն կողմ:

Ապա կարդում է Հ. Հ. Դաշնակցության ֆրակցիայի բանաձևը.

«Լսելով կառավարության զեկուցումը Լոռվա դրության և այն միջոցների մասին, որ նա ձեռք է առել այդ շրջանի հայ ժողովուրդը վրաց զորքերի դեմ պաշտպանելու համար, Հայաստանի Խորհուրդը հավանություն է տալիս կառավարության տեսակետին և ձեռնարկած միջոցներին»:

Գ. Տեր-Խաչատրյան - Որովհետև մեր և դաշնակցության ֆրակցիայի բանաձևերը ըստ էության նույնն են, ուստի մենք հետ ենք վերցնում մեր բանաձևը և միանում ենք դաշնակցության ֆրակցիայի բանաձևին:

Նախագահ - Քվեարկվում է դաշնակցության ֆրակցիայի բանաձևը. ով համաձայն է, թող ձեռք բարձրացնի:

Բանաձևը ստանում է 23 ձայն կողմ և անցնում է:

Նախագահ - Ուրեմն դաշնակցության ֆրակցիայի բանաձևն անցնում է: Նիստը հայտարարում եմ փակված:

Նիստը փակվում է:

Քարտուղար՝ Ե. Սարգսյան

ՀԱԱ, ֆ. 198, g. 1, գ. 15, թթ. 34-46: Բնագիր: Ձեռագիր: